

մանության վերաբերյալ առաջ քաշած տեսակետներին և այդ թեմայի շուրջ նշանագիտական դիրքերից նրա հետաքրքիր դիտարկումներին: Ելնելով թարգմանությունը՝ որպես միջլեզվական և միջմշակութային երևույթ որակելու սկզբունքից և առաջնորդվելով բանաստեղծական տեքստի թարգմանության վերաբերյալ հայտնի տեսաբանների դրույթներով՝ փորձ ենք անում իտալացի և հայ հայտնի հեղինակների ստեղծագործությունների թարգմանությունների որոշակի նյութի հիման վրա վեր հանել իտալերենից հայերեն և հայերենից իտալերեն բանաստեղծական տեքստի թարգմանական դժվարությունների հետ կապված բազմաբնույթ հարցեր:

Վարդանյան Լիլյա

Կանոնավոր և անկանոն թեքման ճանաչողական կաղապարները

Ճանաչողական հոգեկեզվաբանության ոլորտում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում տեղեկույթի ինտեգրման, պահպանման և հիշողության մեջ դրա կազմակերպման վերաբերյալ ուսումնասիրությունները: Կատարվում են բազում փորձարարական հետազոտություններ, որոնց նպատակն է բացահայտել կանոնավոր և անկանոն թեքման ենթարկվող ձևերի մտապահման սկզբունքներն ու առանձնահատկությունները: Հետազոտությունների արդյունքները ձևավորել են երկու հիմնական մոտեցում՝

1. **Զուգորդական մոտեցում** (associative approach), ըստ որի՝ ձևաբանական կառուցվածքը դեր չի խաղում մտապահելիս. բառը պահպանվում է ամբողջությամբ (Ջ. Բայբի, Կ. Պլանկետ, Վ. Մարչման, Բ. Մակվիննի),

2. **Համակցական մոտեցում** (combinatorial approach), որը հակադրվում է առաջինին՝ պնդելով, թե մտապահելիս կոդավորվում է ձևաբանական կառուցվածքը (Ա. Քոլլինզ, Մ. Քվիլիան):

Այս մոտեցումները միևնույն երևույթը դիտարկում են հակադիր բևեռներից: Արդյունավետ կարող է լինել նրանց միջև հաշտության եզրեր գտնել, ինչը և անում է նոր՝ dual-processing կոչվող մոտեցումը (Ս. Փինկեր, Ա. Փրինս, Հ. Կլաշեն և այլք): Ըստ այս մոտեցման՝ անկանոն թեքման ենթարկվող ձևերը մտապահվում են իբրև ամբողջական բառաձևեր, իսկ կանոնավոր թեքման ենթարկվողները՝ վերարտադրվում կանոնների օգնությամբ:

Վարդանյան Սվետլանա

Խոսքային և երգային ձայների փոխազդեցությունը օպերայի ժանրում

Օպերան սինթետիկ արվեստի ձև է, որն իր մեջ ներառում է խոսք և երգեցողություն, բեմականացում և բեմական զարդարանքներ: Օպերայի ժանրի ստեղծումը մեծագույն նվաճում էր երգարվեստի բնագավառում: Այստեղ առանձնակի նշանակություն է ձեռք բերում խոսքային և երգային ձայների միահյուսումը՝ ռիթմի և հնչերանգի առումով: Խոսքային և երգային ձայների փոխազդեցությունն իր ցայտուն դրսևորումն է ստանում ասերգում (речитатив), որտեղ խոսքային ձայնը ձեռք է բերում երգայնություն, իսկ երաժշտությունը դուրս չի գալիս խոսքի ձայնաձավալի շրջանակներից (մեկ օկտավա):

Ասերգում՝ խոսքային և երգային ձայների ռիթմն ու հնչերանգը ներդաշնակեցված են՝ բնորոշելով ասերգը, որպես խոսքի և երգեցողության միջանկյալ օղակ: Պետք է նշել նաև, որ ասերգի մեղեդուն բնորոշ նեղ, անբարեհնչյուն միջակայքերն են (интервалы) հենց այդ մեղեդուն հաղորդում ”արտասանականություն” (декламационность) ու յուրօրինակ արտահայտչականություն: Ասերգը հնարավորություն է տալիս խոսքային ռիթմն ու հնչերանգը դարձնել ավելի ցցուն: